

**ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝**

**20.02.2023 կայացած նիստի**

**թիվ 6 արձանագրություն**

**Օրակարգ**

1. ԵԼՀ ֆակուլտետից ԵՊՀ մեծ գիտխորհուրդ որպես ընտրովի անդամ ներկայացվող անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ ՀՀԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Սեդա Քերոբի Գասպարյանի թեկնածության հարցը

**2.Ընթացիկ հարցեր:**

**ԼՍԵՑԻՆ՝** ԵԼՀ ֆակուլտետից ԵՊՀ մեծ գիտխորհուրդ որպես ընտրովի անդամ ներկայացվող անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ ՀՀԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Սեդա Քերոբի Գասպարյանի թեկնածության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** ԵԼՀ ֆակուլտետի դեկան բ.գ.թ., դոցենտ Գ.Բարսեղյանը խնդրեց առաջադրել թեկնածու, ով լավագույնս կներկայացնի ֆակուլտետը ԵՊՀ գիտական խորհրդում: Արտահայտվողները՝ ադեմիկոս, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա.Մելքոնյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Առաքելյանը և ուրիշներ առաջադրեցին անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս. Ք. Գասպարյանի թեկնածությունը՝ հաշվի առնելով վերջինիս մեծ փորձն ու ներդրումը ոչ միայն ֆակուլտետի, այլև հանրապետությունում անգլիագիտության մասնագիտական դաշտի կայացման գործում և Ս. Գասպարյանի ակտիվ մասնակցությունն ու նվիրումը ֆակուլտետի գիտակրթական և հասարակական կյանքին:

Ելույթ ունեցողները, ամփոփելով իրենց խոսքը, առաջարկեցին պաշտպանել Ս.Ք. Գասպարյանի թեկնածությունը ԵՊՀ գիտական խորհրդում որպես ընտրովի անդամ ընդգրկվելու համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս. Ք. Գասպարյանի թեկնածությունը ԵՊՀ գիտական խորհրդում որպես ընտրովի անդամ ընդգրկվելու համար: Կողմ՝ 36, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝

Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝

Ս.Դալալյան

20.02.2023.թ.